10.56653/18290361-2025.15-58

Հասմիկ Հովսեփյան
Հայաստանի պատմության թանգարան
hasmik.hovsepyan@list.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՊԱՀՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԲԱԺԻՆԸ*

Հիմնաբառեր. Հայաստանի պատմության թանգարան, ֆոնդ, ֆոնդապահ, հավաքածու, պահպանում, գույքամատյան, բաժին

Ներածություն

Հայաստանի պատմության թանգարանի Պահոցների պահպանման բաժինը ստեղծվել է 1960 թ. մարտի 16-ին ՀՍՍՌ ԳԱ № 5/397 որոշման 29-րդ կետի հիման վրա: Բաժինը կազմակերպում է թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների մուտքագրման, հաշվառման, պահպանման, վերականգնման, սպասարկման, համալրման աշխատանքները: ՀՊԹ թանգարանային հավաքածուն 2024 թվականի դեկտեմբերի տվյալներով կազմում է 402.939 միավոր, մասնաճյուղերի հավաքածուներով՝ 408.100 միավոր: Հավաքածուի մեջ ընդգրկված են հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը ներկայացնող առարկաներ, որոնք թվագրվում են նախապատմական ժամանակներից (մեզանից մեկ միլիոն ութ հարյուր հազար տարի առաջ) մինչև մեր օրերը: Առարկաները պահվում են թանգարանի 25 ֆոնդերում (հնագիտական, ազգագրական, դրամագիտական, վավերագրական և այլ):

ՀՊԹ հավաքածուները համալրվում են հնագիտական պեղումների ընթացքում ստացված առարկաներով, գնումների, նվիրատվությունների և այլ միջոցներով: Թանգարանային առարկայի կարգավիճակ ստացած արժեքները գրանցվում են գլխավոր գույքամատյանում և բաժինների գույքամատյաններում, այդպիսով ստանալով երկու համար՝ ԳԳ N և ԲՄ N:

Թանգարանային առարկաները և հավաքածուները հասանելի են հանրությանը:

Թանգարանի հիմնադիր հավաքածուները

Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուի հիմքը դրվեց 1921 թ. օգոստոսի 20-ին, երբ պետությունը հիմնադրվելիք թանգարանի համար գնեց Երևանի բանվորական տան դահլիճում բացված հայ արվեստագետների ցուցահանդեսում ցուցադրված մի քանի տասնյակ նկար (Ղաֆադարյան 1962, 207): Լուսժողկոմի 1921 թ. հոկտեմբերի 19-ի Հնությունների և գեղարվեստի պահպանման կոմի-

* Ստացվել է 18.02.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 19.02.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025 թ.:

տե ստեղծելու վերաբերյալ հրամանն էլ հիմք ծառայեց պետական թանգարանի համար նյութեր հավաքելուն և թանգարանային արժեքները կենտրոնացնելուն (Պողոսյան 2020, 166):

Նորաստեղծ թանգարանում 1921 թվականից 1930 թվականն ընկած ժամանակահատվածում հավաքվեցին Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերության թանգարանի գույքը, կահույքը, գրադարանը, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Էջմիածնից Մոսկվա տեղափոխված թանգարանային առարկաները, հավաքածուներ՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանից, Նոր Նախիջևանից, Սանահինից (Անիի հնադարանից փրկված իրերը), լուծարքի ենթարկված Վաղարշապատի պետական թանգարանից: Ստացվում էին առարկաներ նաև զանազան հաստատություններից՝ Հնությունների պահպանության կոմիտեից, Լուսժողկոմատից, Հողժողկոմատից, Պարենավորման ժողկոմատից, Լենինգրադի և Մոսկվայի թանգարաններից… 1930 թ. տվյալներով թանգարանի հավաքածուն 15.289 միավոր էր (Ղաֆադարյան 1962, 208–214): Հետագայում թանգարանային հավաքածուն համալրվում էր հնագիտական պեղումների ու ազգագրական գիտարշավների ընթացքում ստացված առարկաներով, գնումների, նվիրատվությունների միջոցով…

Թանգարան մուտք գործած բոլոր առարկաները համարակալվում էին, գրանցվում գույքամատյաններում: Մշակվել և հաստատվել էին թանգարանային առարկաների համարակալման կարգը, իրի վրա գույքահամարը գրելու ձևերը: Դրանք տարբեր էին՝ կախված առարկայի տեսակից և նյութից (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 15, 1):

Գույքահամար ստացած առարկաները դառնում էին թանգարանի սեփականությունը: Թանգարանի վարչության 1930 թ. N 8 նիստի արձանագրությունից. «Լուսժողկոմը կարգադրել է, որ իրերը որոնք արդեն մտել են թանգարանի գույքամատյանների մեջ, պիտի համարվեն թանգարանի սեփականություն, նյութը հրատարակելու դեպքում միշտ պիտի հիշատակվի «ՀՍԽՀ թանգարանի նյութերից»» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 15, 8):

Թանգարանային փորձի պակասի պատճառով 1920-ական թվականներին իրերի ընտրությունը, մատյաններում գրանցումները չէին համապատասխանում թանգարանային պահանջներին «…տեղի չէր ունենում թանգարանային իրերի խիստ ընտրություն, չէր զատվում կարևորն և անարժեքը միմյանցից, էքսպոնատները չէին ենթարկվում մանրամասն մշակման» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 645, 1):

1931 թվականից սկսվում է թանգարանային առարկաների զտում «…հեռացնելով այնպիսի իրեր, որոնք ոչ մի թանգարանային արժեք չէին ներկայացնում թե՛ իրենց բնույթով և թե՛ իրենց անհայտ ծագումով, չէին կարող գիտական ուսումնասիրության կամ էքսպոզիցիայի առարկա լինել» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 645, 3):

Թանգարանի աշխատանքների կանոնակարգմանը նպաստեց ՀՍԽՀ Պետական Կուլտուր-Պատմական թանգարանի կանոնադրության ընդունումը 1931 թվականին: Կանոնադրության N 16 կետի համաձայն առարկաները ստանում էին

թանգարանային գույքահամար, գրանցվում թանգարանի «հատուկ սահմանված ձևի և համարակալված գրքի մեջ» և բաժինների գույքամատյաններում (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 19, 4): Վերանայվեցին թանգարանային առարկաների գույքամատյանային գրանցումները. «…բոլոր գույքամատյանների վերանայում և գրանցումների սրբագրում, որի միջոցին կատարվում էր նաև իրերի շատ համառոտ նկարագրություն» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 645, 5):

Ֆոնդերի կազմավորումը

Արդեն 1922թ. Հայաստանի պետական կենտրոնական թանգարանն ուներ 4 հիմնական հավաքածու՝ ազգագրական, հնագիտական, գեղարվեստական և պատմագրական: Քանի որ 1920-ական թվականներին առարկաների թիվը մեծ չէր, թանգարանի բաժիններից յուրաքանչյուրը ուներ մեկ ֆոնդ և հավաքածուներն էլ կրում էին նույն անունը, ինչ բաժինը:

Թանգարանի վաղ շրջանի փաստաթղթերում «ֆոնդ» բառը չի հանդիպում: Հավաքածուն նշելու համար օգտագործվել է «գույք», «ժողովածու», «կոլլեկցիա», «հավաքածու» բառերը, առանձին թանգարանային առարկաների համար՝ «նյութ», «իր», «էքսպոնատ» բառերը (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 222, 2; գործ 20, 1; գործ 19, 1): «Ֆոնդը» առաջին անգամ ՀՊԹ փաստաթղթերում հանդիպում է 1944 թվականից. ազգագրական ֆոնդեր, պատմագրական ֆոնդ, նեգատիվների ֆոնդ… (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 425, 1; գործ 222, 3; գործ 647, 2):

Մինչև 1930-ական թվականների սկիզբը թանգարանային հավաքածուների համար հատկացված առանձին տարածք չկար. առարկաների մի մասը ցուցասրահներում էր, մնացածը՝ աշխատասենյակներում. «…հնարավոր եղավ սենյակներից մեկը դարձնելու պահեստատեղի և աշխատանքի վայր» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 641, 1), «…բաժնի աշխատանքային սենյակում պատերին կից դարակներ պատրաստվեցին և այդտեղ դասավորվեցին բոլոր չցուցադրված իրերը» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 645, 8): ՀՍԽՀ Պետական Կուլտուր-Պատմական թանգարանի 1931թ. կանոնադրության մեջ (կետ N 3Լ) նշվում է, որ անհրաժեշտ է ունենալ «հատուկ թանգարանային պահեստներ» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 19, 2): Հետագայում հավաքածուների համար առանձնացված տարածքները փաստաթղթերում նշված են «պահեստ» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 415, 2), «զետեղարան» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 742, 1) անվանումներով:

Մինչև 1941թ. ՀՊԹ հրամանագրքերում ֆոնդապահ հաստիքը չկա: Բաժնի/սեկտորի վարիչները կատարում էին նաև ֆոնդապահի գործառույթներ: Թանգարանի 1931թ. կանոնադրության մեջ (կետ N 17) գրված է. «Էքսպոնատների ֆիզիկական պահպանության ամբողջ պատասխանատվությունը ընկնում է դիրեկտորի և սեկտորների վարիչների վրա» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 19, 4), թանգարանի 1933 թվականի N 9 հրամանում նշվում է. «սեկտորների վարիչներն են անմիջականորեն պատասխանատու իրենց սեկտորի արժեքների պահպանության համար» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 3, 46):

1941 թվականի հունվարից մինչև 1945 թ. հոկտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում թանգարանի հաստիքացուցակի գիտատատեխնիկական աշխատողների ցանկում կա ինվենտարիզատոր հաստիքը (Վազգանուշ Նանոյան), ով հավանաբար կատարել է ֆոնդապահ-հաշվառողի գործառույթներ: Ինվենտարիզացիան թանգարանային առարկաների նախնական հաշվառումն էր, առանց գիտական մշակման (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 415, 1):

Ֆոնդապահի հաստիքը առաջին անգամ ՀՊԹ փաստաթղթերում հանդիպում է 1945 թվականի հոկտեմբերից. 1945–1961թթ.՝ «պահեստապետ», «ֆոնդի պահեստապետ», «պահեստապետ-պահպանող», «ֆոնդ պահպանող», «ֆոնդ պահող», «ֆոնդի վարիչ» անվանումներով (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 10ից – 31), 1962 թվականից՝ «ավանդապահ» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 32ից – 38), 1972 թվականից՝ «ֆոնդապահ» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 39), 2021 թվականից՝ «գիտաշխատող-ֆոնդապահ», «ֆոնդապահ-կոնսերվատոր», «ֆոնդապահ-հաշվառող»: Գլխավոր ֆոնդապահի հաստիքը 1947 թվականից է՝ ֆոնդերի գլխավոր պահապան անունով (Դշխուհի Սարգսյան) (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 12, 13):

1945 թվականից մինչև 1956 թվականը յուրաքանչյուր բաժին ուներ մեկ ֆոնդապահ: Այդ տարիներին ֆոնդապահներ են եղել Երանուհի Խաչատրյանը, Դշխուհի Սարգսյանը, Հրանուշ Գրիգորյանը, Սիրվարդ Հովհաննիսյանը, Նուբար Հովհաննիսյանը, Վազգանուշ Նանոյանը, Գենյա Դավթյանը, Ռոզա Մնացականյանը, Դերենիկ Վարդումյանը, Էմմա Խանզատյանը (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 12–22):

Ֆոնդապահի գործառույթների մեջ մտնում էր իրեն վստահված ֆոնդի առարկաների պահպանությունը, սպասարկումը: Վաղ շրջանի հաշվետվությունների մեջ թանգարանային առարկաների սպասարկման մասին խոսելիս օգտագործվում է «մատակարարել» բառը (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 646, 2; գործ 647, 4): Ֆոնդապահների կողմից սպասարկված առարկաների քանակը առաջին անգամ հիշատակված է թանգարանի 1960 թ. հաշվետվության մեջ՝ 2781 առարկա (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 742, 7): Այդ տարիների սպասարկվողների մեջ էին գիտնականներ, ռադիոյի, հեռուստատեսության, «Հայֆիլմ» կինոստուդիայի աշխատակիցներ, նկարիչներ, քանդակագործներ, արհեստավորներ, գրողներ, ուսանողներ…: Սպասարկվում էին նաև քաղաքացիներ և կազմակերպություններ ԽՍՀՄ հանրապետություններից, արտասահմանյան երկրներից:

Թանգարանի վաղ շրջանի հաշվետվություններից տեղեկանում ենք, որ պահոցներում թանգարանային առարկաները ցեցից պաշտպանելու համար ամռան ամիսներին արևին էին հանվում, օգտագործում էին նավթալին ու ծխախոտ, կրծողների դեմ պայքարելու համար թակարդներ էին դրվում (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 425, 1):

Վնասատուների դեմ պայքարելու համար 1968 թվականին կազմավորվում է լաբորատորիա (1992 թվականից՝ սեկտոր) (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 37, 2; գործ 58, 9): Վարիչ Մաղլենա Գրիգորյանը ախտահանում էր պահոցների տարածքը, տեղադրում նավթալին, ծխախոտ, նավթով մշակում գորգերը:

1980–ական թվականների սկզբին, երբ հաստատվեց նավթալինի վնասակար ազդեցությունը մարդկանց առողջության վրա, թանգարանում հրաժարվեցին նավթալինի գործածությունից, իսկ ծխախոտից և նավթից՝ 1990-ական թվականներին: Այսօր օգտագործվում են մարդու առողջության համար անվնաս միջոցներ: 2003 թ. լաբորատորիան փակվեց (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 211, 6): Այժմ միջատների և կրծողների դեմ պայքարի գործառույթները իրականացնում են մասնագիտացված կազմակերպությունից հրավիրված աշխատակիցները:

Պահոցների պահպանման բաժնի ստեղծման պատմությունը

Թանգարանում կառուցվածքային փոփոխությունները սկսվեցին 1950-ական թվականների վերջին: 1957 թվականից գիտական բաժիններն առանձնացան, ֆոնդապահներն ընդգրկվեցին գիտատեխնիկական անձնակազմի մեջ (1957–1959 թթ.) (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 26-ից–29):

1960 թվականին ստեղծվեց Թանգարանային գույքի հաշվառման և պահպանման բաժինը: Ըստ Հայաստանի պետական պատմական թանգարանի N 57 հրամանի «Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նախագահության 1960 թ. մարտի 16-ի N 5/397 որոշման 29-րդ կետի հիման վրա սույն թվականի հունիսի 1-ից թանգարանում մտցնել մի շարք փոփոխություններ նրա կառուցվածքն արդի պահանջներին հարմարեցնելու և թանգարանի անխափան զարգացումն առաջիկայում ապահովելու նպատակով: Թանգարանային գույքի հաշվառումն ու պահպանումը ապահովելու նպատակով ստեղծել Թանգարանային գույքի հաշվառման և պահպանման բաժինը, որին կից դարձնել թանգարանի ռեստավրացիոն աշխատանոցները: Թանգարանային բոլոր ֆոնդերը, ինչպես հիմնական, այնպես էլ օժանդակ և ցուցադրական, հանձնել հաշվառման և պահպանման բաժին: Հաշվառման և պահպանման բաժնի վարիչի հաստիք չլինելու պատճառով բաժնի վարիչի պարտականությունները ժամանակավորապես իրականացնելու է թանգարանի տնօրեն Կարո Ղաֆադարյանը» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 30, 20–21):

Բաժնում կար 14 աշխատակից՝ Լևոն Կարապետյան – հին և անտիկ դարաշրջանի ֆոնդերի պահող, Սեդա Դևեջյան – հին և միջնադարյան մետաղե առարկաների պահող, Գենյա Դավթյան – ազգագրական ֆոնդերի պահող, Մարգո Կարապետյան – դրամագիտական ֆոնդերի պահող, Նազիկ Թորամանյան – ազգագրական ֆոնդերի հաշվառող, Մարգո Վահանյան – ֆոտոտեկայի վարիչ, Հենրիկ Սարգսյան – գրավոր ֆոնդերի պահող, Վազգանուշ Նանոյան – մայր մատյանի վարող և թանգարանային գույքի հաշվառող, Էմմա Գևորգյան – միջնադարյան ֆոնդերի պահող, Գուրգեն Արևշատյան – կերամիկայի վերականգնման աշխատանոցի վարիչ, Ստեփան Արփիարյան – ավագ լաբորանտ, Ռդիսևս Հովհաննիսյան – ավագ լաբորանտ, Վահրիճ Ղազազյան – գլխավոր ռեստավրատոր, Ազնիվ Հունանյան – ռեստավրատոր (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 30, 21–22):

Սակայն 1962 թվականից մինչև 1972 թվականի ՀՊԹ հաստիքացուցակներում Հաշվառման և պահպանման բաժին անվանումը չկա: Բաժնի աշխատակիցների մի մասը գիտական անձնակազմի ցուցակում է, մյուս մասը՝ գիտատեխնի-

կական անձնակազմի ցուցակում (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 33-ից–39):

1972 թվականի N 2 հրամանով հաստատվում է ՀՊՊԹ-ի կառուցվածքային նոր բաժանումը: Ֆոնդերի հաշվառման և պահպանության բաժնի վարիչի պաշտոնակատար է նշանակվում Եվգենիա Մուշեղյանը (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 39, 5): 1972 թվականի N 5 հրամանով հաստատվում են Ֆոնդերի հաշվառման և պահպանության բաժնի մեջ մտնող ֆոնդերն ու ֆոնդապահները. Հնագիտական N 1 (միջնադարյան) – Սոնա Մախաթչյան, Հնագիտական N 2 և N 3 (հնագույն) – Կլարա Քալաշյան, Հնագիտական N 4 և N 5 (հնագույն) – Իվետա Մկրտչյան, Հնագիտական մետաղի – Էմմա Գևորգյան, Ազգագրական N 2 – Արմենուհի Սամվելյան, Ազգագրական N 1 – Էլմիրա Թովմասյան, Ազգագրական պղնձե իրեր – Արուս Կարապետյան, Գորգերի – Արուս Կարապետյան, Դրամների – Լենա Կարապետյան, Ավանդների – Լենա Կարապետյան, Թղթադրամների և նամականիշների – Լենա Կարապետյան, Հնատիպ գրքերի – Ռոզա Բաղդասարյան, Նոր պատմության – Ս. Ասլանյան, Գիտական արխիվ – Ս. Ասլանյան, Սևանկարների – Մարգո Վահանյան, Լուսանկարների – Լիլյա Մադոյան, Մարդաբանության և ոսկրի – (ֆոնդապահի անունը չկա) (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 39, 7):

1973 թ. Ֆոնդերի հաշվառման և պահպանության բաժնի վարիչը Եվգենիա Մուշեղյանն էր, գլխավոր ֆոնդապահը՝ Արմենուհի Սամվելյանը, 1974–1976 թթ. բաժնի վարիչը՝ Արմենուհի Սամվելյանը, գլխավոր ֆոնդապահը՝ Մարգո Կարապետյանը: 1976 թվականից մինչև 1989 թվականը բաժնի վարիչը և գլխավոր ֆոնդապահը Իվետա Մկրտչյանն էր (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 40-ից–43):

Կառուցվածքային նոր փոփոխություն իրականացվեց 1977 թ.: Համաձայն Կուլտուրայի մինիստրության կողմից հաստատված թանգարանի նոր կառուցվածքի՝ 1977 թ. հունվարի 16-ից հաստատվեց աշխատակիցների նոր հաստիքներ՝ ըստ բաժինների և սեկտորների: Ֆոնդերի հաշվառման և պահպանման բաժնի մեջ էին մտնում.

- Ֆոնդերի հաշվառման բաժինը,
- Հնագիտական իրերի հաշվառման և պահպանման սեկտորը,
- Ազգագրական իրերի հաշվառման և պահպանման սեկտորը,
- Դրամների, թանկարժեք մետաղների, զենքերի, ավանդների հաշվառման և պահպանման սեկտորը,
- Վավերագրական նյութերի, լուսանկարների, նեգատիվների, գեղարվեստական աշխատանքների և ճարտարապետական գծագրերի հաշվառման և պահպանման սեկտորը» (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 44, 5):

Այս կառուցվածքը պահպանվեց մինչև 1989 թվականը: Թանգարանի 1989 թ. N 101 հրամանով սեպտեմբերի 1-ից թանգարանի հաստիքային ցուցակում և կառուցվածքում կատարվեցին փոփոխություններ (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 55, 47): Ֆոնդերն ընդգրկվեցին գիտական բաժինների մեջ՝ Հնագիտության, Ազգագրության, Դրամագիտության, Նոր պատմության, Խորհրդային շրջանի պատմության, հնատիպ գրքերի ֆոնդը՝ գիտական գրադարանում: Գլխավոր ֆոնդապահ նշանակվեց Գոհար Խաչատրյանը: 1989–1997 թթ. գործում էր Ֆոնդերի

հաշվառման սեկտորը (վարիչ՝ Մարետա Կիրակոսյան) (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 3, գործ 55–62), որի գործառույթը Մայր մատյանի և նրա հետ կապված փաստաթղթերի վարումն էր:

Պահոցների պահպանման բաժինն այսօր

2021 թվականի հունվարին թանգարանում կատարվեցին կառուցվածքային փոփոխություններ: Ստեղծվեց Պահոցների պահպանման սեկտորը, վարիչ՝ Գոհար Խաչատրյան, 2022 թ-ից՝ Պահոցների պահպանման բաժին, վարիչ՝ Հասմիկ Հովսեփյան: 2025 թվականի հունվարի դրությամբ բաժնում աշխատում է 7 ֆոնդապահ-կոնսերվատոր, 1 ֆոնդապահ-հաշվառող. Մարետա Կիրակոսյան, Նանա Մադոյան, Վեռա Բոյան, Տաթևիկ Մարտիրոսյան, Վարսիկ Բաղալյան, Փիրուզա Սահակյան, Սուսաննա Համբարձումյան, Երազիկ Դանիելյան, Մարինե Կիրակոսյան: Ֆոնդապահներն իրականացնում են իրենց վստահված ֆոնդի առարկաների պահպանությունը, սպասարկումը, վերականգնման կարիք ունեցող առարկաները վերականգնման տալը, ֆոնդի գույքամատյանի գրանցումները, առարկաների վրա գույքահամարի նշումը, օդափոխման կարիք ունեցող իրերի փոփոխքը, միջատների դեմ պայքարի միջոցների տեղադրելը, ներկայացնում են հաշվետվություն և պլան, մասնակցում են թանգարանի ֆոնդերի հանձնման-ընդունման, ստուգման աշխատանքներին: Վերջին տարիներին թվայնացրել են ՀՊԹ թանգարանային գույքամատյանները, փաստաթղթերի, լուսանկարների մեծ մասը:

Ֆոնդապահները պարբերաբար մասնակցում են որակավորման բարձրացման, վերապատրաստման միջազգային և տեղական դասընթացների, սեմինարների:

2021 թվականի հունվարից ՀՊԹ գլխավոր ֆոնդապահը Սոնա Հովսեփյանն է: Գլխավոր ֆոնդապահը համակարգում է պահոցների պահպանման բաժնի, թանգարանային առարկաների վերականգնման լաբորատորիայի, ցուցադրության բաժնի, գրադարանի, արխիվի աշխատանքները, կատարում է գլխավոր գույքամատյանի գրանցումները, կազմում թանգարանային գրանցում ստացած առարկաների և հավաքածուների փաստաթղթերը, ֆոնդային-գնահատու հանձնաժողովի նախագահն է:

Թանգարանային առարկաների և հավաքածուների ամբողջության ապահովման համար թանգարանում ստեղծված է պահպանության հատուկ ռեժիմ, որը նախատեսում է բոլոր տեսակի ռիսկերից պաշտպանում և վտանգների կանխարգելում: Անցկացված է հակահրդեհային ազդանշանային համակարգ, տեղադրված են կրակմարիչներ, տեսախցիկներ, դրված են ջերմաստիճանը և խոնավությունը ցույց տվող սարքեր, ջեռուցման և օդափոխման նոր համակարգը թույլ է տալիս կարգավորել ջերմաստիճանը: Կողմնակի անձանց մուտքը պահոցներ արգելված է: Ֆոնդապահը փակում և կնքում է իրեն հանձնված ֆոնդի դուռը: Նախատեսվում է պահոցներում անցկացնել վերանորոգման, նոր դարակաշարերի տեղադրման աշխատանքներ, ձեռք բերել թթվազերծ ստվարաթղթե տուփեր:

Եզրակացություն

ՀՊԹ Պահոցների պահպանման բաժնի աշխատանքները անմիջականորեն կապված են թանգարանի հավաքածուների հետ: Թանգարանի գոյության ավելի քան մեկդարյա փորձի հիման վրա մշակվել, կանոնակարգվել են ֆոնդային աշխատանքները:

ՀՊԹ հավաքածուները պարբերաբար համալրվում են: Ֆոնդերը (հիմնական, գիտաօժանդակ, ժամանակավոր պահպանման, փոխանակման) ավելի ու ավելի հասանելի են դառնում հանրությանը: Համացանցի միջոցով հասանելի են նաև չցուցադրված, պահոցներում պահվող թանգարանային առարկաները: ՀՊԹ պաշտոնական կայքում, սոցիալական ցանցերում, «Հայկական գանձարան» մշակութային արժեքների էլեկտրոնային-տեղեկատվական շտեմարանում տեղադրված են ավելի քան 50.000 միավոր առարկայի լուսանկար և տեղեկություններ: Տարեցտարի ավելանում է սպասարկումների թիվը. 2024թ. կատարվել է 13.980 միավոր առարկայի սպասաարկում:

Թանգարանի մյուս բաժինների հետ համատեղ Պահոցների պահպանման բաժնի առաքելությունը մշակութային արժեքների ձեռքբերումը, թանգարանային հավաքածուների հանրահռչակումը, մշակութային ժառանգության պահպանությունն ու սերունդներին փոխանցումն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 3:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 15:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 19:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 20:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 222:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 415:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 425:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 641:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 645–647:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 742:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 10–44:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 211:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 55–62:

Գրականություն

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1962 – Ղաֆադարյան Կ., Հայաստանի պետական պատմական թանգարանը, *Պատմա-բանասիրական հանդես*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 1962, № 2, էջ 207–215:

ՊՈՂՈՍՅԱՆ 2020 – Պողոսյան Դ., *Թանգարանագիտության տեսություն և թանգարանագիտական միտքը Հայաստանում*, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2020:

Էլեկտրոնային նյութ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ, https://historymuseum.am/history-and-mission/ (15.02.2025-16.00):

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՊԹ – Հայաստանի պատմության թանգարան

ԳԴ – Գլխավոր գույքամատյան

ԲՄ – Բաժնի մատյան

ՀՍԽՀ – Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն

ՀՊՊԹ – Հայաստանի պետական պատմական թանգարան

Hasmik Hovsepyan
History Museum of Armenia
hasmik.hovsepyan@list.ru

DEPARTMENT OF CATALOGING AND MAINTAINING THE HMA COLLECTIONS

Keywords: History Museum of Armenia, fund, keeper, collection, storage, department, inventory book

The department of Cataloguing and Maintaning the HMA collections was founded on March 16, 1960, based on Article 29 of the Armenian SSR Government Resolution No. 5/397: “to make structural changes in the museum, to set up a cataloguing and maintaining department, handing over all museum funds (main, scientific-auxiliary and exhibition) to it. Over the years, a number of structural changes have been made. The current structure of the department was approved in January 2021.

The department organizes the processes of acquisition, accounting, preservation, restoration, maintenance, and replenishment of museum items and collections. As early as 1922, the State Central Museum of Armenia had four main collections: ethnographic, archaeological, artistic, and historical. According to data from 1930, the museum's collection consisted of 15,289 items. As of December 2024, it includes 402,939 items, and with the collections of the branches, the total is 408,100 items.

The collection includes objects that represent the history and culture of the Armenian people, dating from prehistoric times (approximately 1.8 million years ago) to the present day. The items are stored in 25 museum departments (archaeological, ethnographic, numismatic, documentary, and others). The museum items and collections are available to the public.

The collections of the History Museum of Armenia are replenished with items obtained through archaeological excavations, purchases, donations, and other means.

Асмик Овсерян
Музей Истории Армении
hasmik.hovsepyan@list.ru

ОТДЕЛ УЧЕТА И ХРАНЕНИЯ КОЛЛЕКЦИЙ МИА

Ключевые слова: Музей истории Армении, фонд, хранитель фонда, коллекция, хранение, отдел, инвентарная книга

Отдел учета и хранения коллекций Музея истории Армении был создан 16 марта 1960 года на основании пункта 29 постановления № 5/397 Академии наук АрмССР. Были внесены изменения в структуру с целью адаптации к современным требованиям и обеспечения бесперебойного развития музея в будущем. Для обеспечения учета и хранения музейного имущества был создан отдел учета и хранения музейного имущества, к которому были присоединены реставрационные мастерские музея. Все музейные фонды, как основные, так и вспомогательные и выставочные,

были переданы в отдел учета и хранения. За годы были проведены ряд структурных изменений. Текущая структура отдела была утверждена с января 2021 года.

Отдел организует процессы поступления, учета, сохранения, восстановления, обслуживания и пополнения музейных предметов и коллекций. Уже в 1922 году Государственный центральный музей Армении имел 4 основные коллекции: этнографическую, археологическую, художественную и историческую. По данным 1930 года, коллекция музея насчитывала 15 289 единиц, на декабрь 2024 года насчитывает 402 939 единиц, а с учетом коллекций филиалов — 408 100 единиц.

В коллекцию входят предметы, представляющие историю и культуру армянского народа, датируемые с доисторических времен (примерно 1 миллион 800 тысяч лет назад) до наших дней. Предметы хранятся в 25 фондах музея (археологический, этнографический, нумизматический, документальный и другие). Музейные предметы и коллекции доступны для общественности.

Коллекции МИА пополняются предметами, полученными в ходе археологических раскопок, покупками, дарениями и другими способами.